

Հավելված
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2017 թվականի մարտի -ի №-- Ն որոշմամբ

«Հավելված N2
Հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2009 թվականի փետրվարի 18-ի №30Ն որոշմամբ

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՆՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Ցանցի սպասարկման գոտու աշխարհագրական տեղակայման մասշտաբային գծապատկերը, որն ընդգրկում է մալուխային գծերը, բազային կայանների աշխարհագրական տեղակայման կոորդինատները (ռադիոկապի դեպքում):
2. Ցանցի կառուցվածքային (ներառյալ հեռանկարային զարգացման) և ֆունկցիոնալ (կապի կազմակերպման) սխեմաներն իրենց միացնող-անջատող կամ ուղղորդող սարքավորումներով, մալուխներով, ռադիոկապով և այլ ռեսուրսներով, որոնք ապահովում են իրականացվող գործունեության տեսակները:
3. Ցանցով իրականացվող գործունեության տեսակների նկարագիրը:
4. Ցանցի տեխնիկական բնութագրերը, որոնք ընդգրկում են՝
 - 1) օգտագործվող սարքավորումների տեխնիկական բնութագրերը (ներառյալ ինտերֆեյսները),
 - 2) սարքավորումների տեղակայման պահարանները (զբաղվածության ծավալները), էլեկտրասնուցման աղբյուրների տեսակները, դրանց հզորությունները և լարումները,
 - 3) օգտագործվող աշտարակների ու կայմերի տեսակները և դրանց զբաղվածության ծավալները:
 - 4) առանցքային մայրուղային ցանցի թողունակությունը,
 - 5) վերջնական օգտվողների առավելագույն թվաքանակը,
 - 6) օգտագործվող ռադիոհաճախականությունները և դրանց բաշխման սխեման (ռադիոկապի դեպքում):